



## ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ՈՐՈՇՈՒՄ

10 սեպտեմբերի 2021 թվականի թիվ 141-Ս  
ք. Երևան

#### ԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ՍՓՈՄԱՆ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 44-րդ հոդվածի 1-ին, 6-րդ մասերի, 60-րդ հոդվածի 14-րդ մասի և Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 8-ի «Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթի անցկացման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» թիվ 94-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթներով և հիմք ընդունելով ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի 2021 թվականի օգոստոսի 10-ի թիվ 01/11.1/4601-2021 գրությունը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշում է.**

1. 2021 թվականի սեպտեմբերի 10-ին հայտարարել լսողական ծրագրի հաճախականության օգտագործման լիցենզավորման մարզային՝ ՀՀ Վայոց ձորի մարզի տարածքում սփռման մրցույթ:
2. Հաստատել լսողական ծրագրի հաճախականության օգտագործման լիցենզավորման մրցույթի մասին տեղեկատվությունը՝ համաձայն Հավելվածի:
3. Հրապարակել մրցույթի մասին տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների [www.azdarar.am](http://www.azdarar.am) և Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի [www.tvradio.am](http://www.tvradio.am) պաշտոնական ինտերնետային կայքերում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պատշաճ իրազեկմանը հաջորդող օրվանից:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ  
ՀԱԿՈՒԲՅԱՆ

Տ.

### ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

#### Լսողական ծրագրի հաճախականության օգտագործման լիցենզավորման մարզային սփուման մրցույթի մասին

1. Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը՝ լսողական ծրագրի հաճախականության օգտագործում.
2. Սփուման տարածքը՝ ՀՀ Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր՝ 94.7 ՄՀց, ք. Վայք՝ 99.7 ՄՀց և ք. Ջերմուկ՝ 97.1 ՄՀց:
3. Մրցույթին մասնակցելու համար ներկայացվում է՝
  - 1) հայտ (ձևը կցվում է),
  - 2) փաստաթուղթ՝ լսողական մեդիաձառայություն մատուցողի նախանշած նպատակների իրագործման հիմնական ուղղությունների և միջոցառումների ընդհանրական նկարագրի վերաբերյալ,
  - 3) ֆինանսական աղբյուրները հիմնավորող փաստաթղթեր,
  - 4) տվյալներ օգտագործվելիք տեխնիկական միջոցների վերաբերյալ,
  - 5) տեղեկություններ աշխատակազմի քանակի, նրանց կրթության և մասնագիտության վերաբերյալ,
  - 6) էթիկայի կանոնագիր,
  - 7) էթիկայի կանոնագրի դրույթների ապահովման ինքնակարգավորման միջոցները,
  - 8) մրցույթին մասնակցելու համար 900005164588 հաշվեհամարին «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված 150 000 ՀՀ դրամ պետական տուրքի վճարումը հավաստող անդորրագիրը:
4. Հայտին կից փաստաթղթերը ներկայացվում են երեք նույնական փաթեթով՝ յուրաքանչյուրը թելակարված, համարակալված, վերջին թերթի հետնամասում, կարի վրա փակցված պիտակով՝ «Բաղկացած է ... թերթից» գրառմամբ («...» նշվում է թերթերի քանակը), ստորագրված և կնքված (կնիքի առկայության դեպքում): Փաթեթները ներկայացվում են փակ ծրարով՝ ստորագրված և կնքված (կնիքի առկայության դեպքում):
5. Հայտերն ընդունվում են 2021 թվականի հոկտեմբերի 11-ից մինչև նոյեմբերի 1-ը ներառյալ, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 9:00-18:00-ն: Հայտերը և կից փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով՝ ՀՀ, ք. Երևան, Իսահակյան 28 հասցեով:
6. Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար զանգահարել 010 52 94 06 հեռախոսահամարով կամ գրել [licensing@tvradio.am](mailto:licensing@tvradio.am) էլ. փոստի հասցեով:

\_\_\_\_\_ին  
(անուն, ազգանուն)

**Հ Ա Յ Տ**

**Լսողական ծրագրի հաճախականության օգտագործման  
լիցենզավորման մրցույթին մասնակցելու**

Հայտատուի անվանումը \_\_\_\_\_

Գտնվելու/հաշվառման վայրը \_\_\_\_\_

Պետական գրանցման/հաշվառման համարը \_\_\_\_\_

Հեռախոսահամարը, էլ. փոստի հասցեն \_\_\_\_\_

Սփռման տարածքը \_\_\_\_\_

Տեղեկություն հեղինակագործման վերաբերյալ \_\_\_\_\_

Հաստատում եմ «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 15-րդ հոդվածում նշված  
սահմանափակումների բացակայությունը:

Կից փաստաթղթեր՝ \_\_\_\_\_ թերթ:

Հայտատու \_\_\_\_\_  
(անուն, ազգանուն)

\_\_\_\_\_ (ստորագրություն)

Կ.Տ. (կնիքի առկայության դեպքում)

\_\_\_\_\_ (օրը, ամիսը, տարեթիվը)